չունին տալիք չեն ինծի կուտան այսքան ստակ. իմ հայրս որ Երուսաղէմ գնաց նէ իւ բաակ նաղդ ստակ ունիր. թագաւորին արգուհալ կ'անեմ. մարդ թայլին կ'անեմ և այլն»։

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԹՈՐՈՍԵԱՆ, ԲՂԵՑԻ.— Մբ. Ծ. 1883ին. Ձռ. 1913ին. հիւրընկալ և յետոյ աւագ քարգման 1921ին. ՏԲ. (1922—23). ՏՌ. 1924ին, կը պաշտօնավարէ մինչև ցայժմ։

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԽԱՊԱՅԵԱՆ, ԽԱՐԲԵՐԴՑԻ.— Մբ. 1870ին. Ձռ. 1898ին, ՏՊ. (1901—4). եղած է նաև Զէյթունի ու. ապա Վանայ առաջնորդական տեղապահ կը վախճանի 1908ին Պոլսի ազգ. հիւանդանոցին մէջ։

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՄՇԵՑԻ.— Մբ. (1692—1701). կը յիշուի Մինաս Ամգեցիի Օրագրութեան մէջ։

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՊՈԼՍԵՑԻ.— Մբ. Ձռ. 1804ին. Յակոբ Սրապիոն Մուրատեան, 1837ի ձեռագիր բժշկարանի մը մէջ այս Ներսէս վրդ.ի յիշատակութեան առթիւ անոր անուան դիմացը կը նշանակէ հերձեալ բառը։

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՁԱՐԵՔՑԻ.— Մբ. Զարեքի (Դանձակ). 1704 ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Դաւազանագիրք մը, որուն յիշատակարանը կը գտնենք հոս.

«Յիշէք ի Քս. զտատցող սորին զտէր Ներսէս վարդապետն. Զարիքու Անապատցին... գրեալ իւրով մատամբն. ի վայելումն անձին իւրոյ. ի թուին ՌՃԾԴ (=1704) ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. ի դուռն Ս. Յակոբայ առաքելոյն» (Թոփ. Ցուց. Թ. 40, էջ 52)։

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՏԱՐՈՆԵՑԻ.— Մբ. Ձռ. 1832ին։

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ՊԷԼԷՑԻՍԵՑԻ.— Մբ. Ձռ. 1879ին. ժամարար Ցոպպէյի մէջ, կը վախճանի 1893ին։

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՏՕԼԱՊՃԵԱՆ, ՄԱԲԱՇՑԻ.— Մբ. Ծ. 1878ին. աշկ. ժառ. Վարժ.ի (1900—6). ուրարակիր 1907ին. լս. և սրկ. (1909—12). ուսանելու համար կը մեկնի Եւրոպա և յետոյ կ'անցնի Ամերիկա, բայց զրամական պատճառներով չի յաջողիր և իբր կամաւոր կ'ուղևորի Կովկաս (1914—16). Ձռ. Ս. Էջմիածին, իբր Մբ. Ս. Երուսաղէմի և կը վարէ օգն. լսպ.ի պաշտօնը Մայր Տաճարին մէջ (1917—19). կը վերադառնայ Ս. Յակոբ 1920ին. մատարար (1920—21). Տէ. և Առ. Անտիոքի